

72. ՄԱՐԴԻՍ ՄՈՒԽԱՆՆԱԹՈՒԹԻՆ

Կէլնի մեյ մարթմ, զըմեն կյախ խաց որ կուտի կպոծնի, էավիլին կտանի կտնի սնդկիմ մեչ, պերան էլ կթողնի պաց: Մեկ օցմ էլ զմեն օր ոսկիմ կպոնի պերան, կպիրի կտնի մեջ էն սնդըկին, էն տեղաց կերեր կուտի, կթողնի կէրթա: Էն մարթն էլ հա կուգա ոսկին կառնի, Լնտեղ կեր կտնի: Մեկ օր էլ օց որ ոսկին կպիրի կտնի էնտեղ, կանի որ կերն ուտի էրթա, մարթն ի, խելք-խուրուջ կանի, սնդկի կափաղ կտնի վերեն կփակի: Դեորմ կմնա կմեզի, կփեռշմնի ուր արած, ամա կվախենա սնդկի պերան պանա, կվախենա, որ չէ՛լնի օցն ուր դեղի: Կտիսնա, որ չէլնե, կառնի սնդյուկ, կտանի կտնի սարիմ գլեռխ, վերեն կկրի. մեյ պացող կփեռշմնի, մեյ չպացող. կտառնա, կուգա տուն:

Օրմ խովիվմ կէրթա, էն սնդյույ կտիսնա, կիր կարտա, չկանա ուր պռնե, պերան կպանա. խեր պանալուն օցմ կէլնի տյուս, կանի որ ինոր տեղի, խովիվ կասի. - Ինչի՞ տըսնա կանես, ես քե ազատիցի:

Օցն էլ կասի. - Ինոր խամար որ մարթ բեբախտ ի:

Կասի. - Չէ՛:

Օցն էլ կասի. - Խա:

Խովիվ կասի. - Էրթանք խառցուցենք, թե որ քո խոսկն էլավ, զաթի տյու ձի դեղի, թե որ չէ, թող էրթամ:

Կասի. - Աղեկ:

Կէրթան, դեմքներ մեյ տյախ եգմ կուգաս, ինոր կխառցուցեն:

Կասի. - Խա, մարթ բեբախտ ի, - կասի, - քանի որ ես ջրհել ի, վոժս կեղն էր՝ ձի կպախին, եվ կյախացա, վոժե ինգա, մլիցին տյուս:

Խովիվ կասի. - Մեկ էլ կխառցուցենք:

Օց կասի. - Աղեկ:

Կէրթան, ըստրիս տյախ ծիմ կուգա դեմքներ. կխառցուցեն, էն էլ եզան պես կասի:

Խովիվ կասի. - Մեկ էլ պիտի խառցուցենք, որ Աստծու իրեք թրմրմի:

Կէրթան՝ աղվեսմ կուգա դեմքներ, կխառցուցեն, մարթն էնդեհեն աչքով կանի, կասի. ես քո աղեկութնից կէլնեմ:

Աղվեսն էլ կասի. - Մարթ բեբախտ չի, մարթ քանճ հըմեն աղեկ ի:

Օյ որ էսա կլսի, կասի. - Դե աղեկ, որ ըսկուն ի, կնա:

Օյ կթողնի կէրթա, մւսրթն էլ սաղվըսուն կասի. - Դե արե էրթանք քո աղեկութնիցն էլնեմ:

Կառնի կտանի կեղ, կասի. - Տյու կայնի վեր դռան, ես մտնեմ ներս քե խավ պիրեմ:

Կասի. - Դե աղեկ:

Խովիվն ի, խեստ մտնելուն՝ թազին կառնի կէլնի տյուս, կփոթուցի վերեն, խեխտել կուտա, փոստն էլ կխանի կտանի, կծախի: Գեռ էսա ի մարթու աղեկութեն: